**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվելու են 2021 թվականի հունիսի 20-ին:**

**Էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք ունեն**

- ✓ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները.
- ✓ օտարերկրյա պետություններում երկարաժամկետ ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները.
- ✓ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները:

Էլեկտրոնային եղանակով քվեարկությունն իրականացվում է՝

- ✓ [https://online.elections.am](https://online.elections.am) էջ այցելելով կամ
- ✓ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի՝ [www.elections.am](http://www.elections.am) համապատասխան հղման միջոցով:




Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021թ. հունիսի 20-ի ընտրությունների էլեկտրոնային եղանակով քվեարկությունը՝

- ✓ **<u>սկսվում է</u> 11.06.2021թ-ից՝ Երևանի ժամանակով ժամը 08.00-ից.**
- ✓ **<u>ավարտվում է</u> 13.06.2021թ.՝ Երևանի ժամանակով ժամը 20.00-ին:**

## ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

***քայլ 1. ընտրողը մուտք է գործում կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի [www.elections.am](http://www.elections.am)՝ էլեկտրոնային քվեարկության համապատասխան էջը և գրանցվում:***




***Գրանցումը կատարվում է հետևյալ կերպ.***

1. ընտրողը համապատասխան դաշտերում մուտքագրում է իր Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի սերիան և համարը, որի արդյունքում համակարգը ցուցադրում է ընտրողի անունը, ազգանունը.
2. մուտքագրում է փակ ծրարով իրեն փոխանցված անհատական ծածկագիրը.



3. համակարգը առաջարկում է ընտրողին ներմուծել իր՝ որպես օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը: Յուրաքանչյուր ընտրող ինքն է որոշում իր օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը: Ցանկության դեպքում ընտրողը կարող է նշել իր էլեկտրոնային փոստի հասցեն: Օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը մուտքագրելուց հետո ընտրողի համար ապահովվում է համակարգի հասանելիությունը:

***քայլ 2. Ընտրողը մուտք է գործում կայքի «Քվեարկել» բաժինը՝ մուտքագրելով օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը***




***քայլ 3. Ցուցադրվում է քվեաթերթիկը և ընտրողը սպասում է քվեարկելու հնարավորություն***



***քայլ 4. Ընտրողը կատարում է իր ընտրությունը՝ նշում կատարելով այն կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանման դիմացի քառանկյունում, որին կողմ է քվեարկում: Քվեարկությունը կատարելուց հետո հաստատում է քվեարկության արդյունքը:***

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*Մինչև էլեկտրոնային քվեարկության սահմանված ժամկետի ավարտը, ընտրողը, մուտք գործելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի՝ էլեկտրոնային քվեարկության համապատասխան էջ, մուտքագրելով իր՝* ***որպես օգտվողի անունը և անհատական գաղտնաբառը****, անսահմանափակ հնարավորություն ունի փոխելու իր քվեն*

*Այդ դեպքում ընտրողի՝ նախկինում քվեարկած քվեաթերթիկը չի ցուցադրվում՝ քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանման նպատակով:*

Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվարկվում է էլեկտրոնային քվեարկությամբ **տրված վերջին քվեն**:

Այն քվեաթերթիկները, որոնք չեն ներառի նշում որևէ կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին համարվում են անվավեր: Դա հիմք չէ էլեկտրոնային եղանակով քվեարկողի համար ընդգրկվել ընտրողների հիմնական ցուցակում, քանի որ համակարգում բացակայում է կապը քվեաթերթիկի և էլեկտրոնային եղանակով քվեարկող ընտրողների ցուցակի միջև:

Էլեկտրոնային քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում քվեարկության ավարտից հետո՝ 2021թ. հունիսի 20-ին՝ Երևանի ժամանակով ժամը 20:00-ից հետո:

Էլեկտրոնային քվեարկության կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 17-ի թիվ 32-Ն որոշմամբ, որին կարող եք ծանոթանալ հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Լրացուցիչ խորհրդատվություն կարող եք ստանալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից՝

հեռ. +37410 56-32-08

էլ. փոստի հասցե **info@elections.am**: